ԿԱՐԻՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ՔՆԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ ՇԱՐՈՒՐ-ԴԱՐԱԼԱԳՅԱԶՈՒՄ (1905 Թ.)

*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.255*

## ԱՄՓՈՓՈՒՄ

1905-1906 թթ. Այսրկովկասում տեղի ունեցան բուռն իրադարձություններ, որոնք որոշակի ժամանակահատվածում ողջ հայության ուշադրությունը սևեռեցին կովկասահայ խնդիրների վրա: Կողք կողքի ապրող հայ և թաթար բնակչության փոխհարաբերություններում կուտակված բազմազան խնդիրները, ցարական իշխանությունների հրահրիչ քաղաքականության շնորհիվ, դրսևորվեցին իրենց բոլոր երանգներով՝ օրակարգի գլխավոր հարց դարձնելով կովկասահայության գոյապայքարի և արդյունավետ ինքնապաշտպանության կազմակերպման հարցերը: Կովկասահայությունն այդ տարիներին ծանր, բայց պատվավոր փորձության շրջան անցավ: Նա ունեցավ մարդկային ու նյութական ծանր կորուստներ, բայց ստացավ նաև ինքնավստահության և ազգային արժանապատվության անհրաժեշտ դասեր:

Հայ-թաթարական կռիվների բռնկման համար պատճառ հանդիսացան էթնիկական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, կրոնական և մի շարք այլ գործոններ (**Ստեփանյան Գ., 2021, Եղիազարյան Կ., 2025**): Ակներև էր երկու ժողովուրդների մշակութային-քաղաքակրթական ձգտումների հակասությունը: Այս տարբերությունն առիթ է տվել որոշ տեսաբանների մինչև իսկ հայերին մեղադրելու իբրև թե հայ նացիոնալիստները միայն հայ ժողովրդի մասին են մտածել և չեն զբաղվել նաև հարևան թուրքերի կրթությամբ ու դաստիարակությամբ (**Թարխանյան Գ., 2002**): Կռիվները բացի Բաքվից,

տարածվեցին նաև Երևանի նահանգի տարբեր գավառներում: Կռիվներից անմասն չմնաց նաև Շարուր-Դարալագյազը:

***Բանալի բառեր և արտահայտություններ:*** *Հայ-թաթարական կռիվներ, Շարուր, Դարալագյազ, Նիկոլ Դուման, Առյուծ Ավագ, Սեյդո Պոդոս, ինքնապաշտպանություն:*

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1897 թ. ցարական վիճակագրությամբ Անդրկովկասում թաթարների թիվը կազմում էր 1 միլիոն 472 հազար, որոնք հիմնականում ապրում էին Բաքվի նահանգում, Գանձակի նահանգի դաշտային մասում և Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում **(Թարխանյան Գ., 2002):** Երևանի նահանգում[1] թաթարները կազմում էին ընդհանուր բնակչության 37,2 %-ը **(Թարխանյան Գ., 2002):** Նահանգի 7 գավառներից (Շարուր-Դարալագյազ, Նախիջևան, Երևան, Սուրմալու, Նոր Բայազետ, Ալեքսանդրապոլ և Էջմիածին) ամենափոքրը Շարուր-Դարալագյազի գավառն էր[2]: Գավառը բաղկացած էր երկու մասից՝ Շարուրից և Դարալագյազից կամ Վայոց Ձորից: Ըստ Ա-Դոյի (Հովհաննես Գրիգորի Տեր-Մարտիրոսյան) տվյալների՝ գավառի ընդհանուր բնակչությունը 76 հազար էր, որից 55 հազարը թուրքերն էին, իսկ 21 հազարը՝ հայերը **(Ա-Դо, 1907)**: «Մուրճ» հանդեսի տվյալներով գավառի ընդհանուր բնակչությունը կազմում էր 81 408 մարդ, որից 22 650 հայեր էին, իսկ 55 790-ը թուրքեր **(«Մուրճ», 1905)**: Գավառը Նախիջևանի գավառի հետ միասին դարձել էր թուրանականների և իսլամիստների գլխավոր թիրախ, որն ըստ նրանց՝ սեպ էր թուրանական միաձույլ ազգաբնակչության միջև:

Շարուր-Դարալագյազն ուներ 163 գյուղ, որոնցից 109-ը գտնվում էին Դարալագյազում, իսկ 54-ը՝ Շարուրում: Գավառի 163 գյուղերից հայաբնակ էր 33-ը,

---

[1] Երևանի նահանգը գտնվում էր Ռուսական կայսրության ծայրամասում: Սահմանակից էր Կարսի մարզին, Բաքվի և Թիֆլիսի նահանգներին, իսկ հարավից՝ Պարսկաստանին և Օսմանյան կայսրությանը: Տարածքը 26 500 քառ. կմ էր: Ազգաբնակչության ընդհանուր թիվը, ըստ 1902 թ. պաշտոնական վիճակագրության, կազմում էր 916 496 մարդ, որից՝ 508 358-ը՝ հայ (55,5 տոկոս), 341 310-ը՝ թուրք-թաթար (37,2 տոկոս), 66 828-ը՝ այլազգի (7,3 տոկոս) **(Թարխանյան Գ., 2002):**

[2] 1828 թ. Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Շարուրը Նախիջևանի մյուս գավառների հետ մտել է Ռուսաստանի կողմից կազմված Հայկական մարզի, ապա՝ 1849 թ. Երևանի նահանգի մեջ, իսկ 1875 թ. Վայոց ձորի հետ միասին կազմել է Շարուր-Դարալագյազի գավառը, որը փաստորեն պահպանվեց մինչև 1918 թ.:

որից 8-ը գտնվում էր Շարուրում, իսկ 25-ը՝ Դարալագյազում **(«Մուրճ», 1905)**: Ի տարբերություն Շարուրի, Դարալագյազի հայ բնակչությունը հայ-թաթարական կռիվներում կարողացավ լավ դիմադրություն ցույց տալ թաթարներին, քանի որ կազմում էր բնակչության 44 %-ը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հիմնախնդրի լուսաբանման հիմքում դրված են պատմականության, փաստերի համադրության և իրադարձությունների համակողմանի վերլուծության պատմահամեմատական և պատմաքննական մեթոդները:

**ՔՆՆԱՐԿՈՒՄ**

**Կռիվները Շարուրում:** 1905թ. հայ-թաթարական ընդհարումների ալիքը Նախիջևանից անցավ Շարուր-Դարալագյազի և մասամբ Զանգեզուրի սահմանները: Շարուրում իրավիճակը սրվել էր դեռ փետրվարից, որի հետևանքով շուտով թաթարական գյուղերում հայերի անցուդարձը դադարեց: Ինչպես արդեն նշել ենք Շարուրի 54 գյուղերից հայաբնակ էին 8-ը ՝ Դաշարխը, Թազաքենդը, Փարչին, Խանլուխլարը, Ալաքլուն, Վարմազիարը, Ուլյանորաշենը, Քեշտազը **(Թարխանյան Գ., 2002)**: Հայերը կազմում էին Շարուրի բնակչության 15%-ը **(«Մուրճ», 1905),** զբաղվում էին խաղողի, բրնձի, բամբակի մշակությամբ և ունեին կայուն տնտեսություն: Նախիջևան գավառի ավերումից և Երևանի մայիսյան ընդհարումներից հետո կռիվների ասպարեզ դարձան այդ 8 գյուղերը:

Ընդհարումները Շարուրում ավելի մեծ չափերի հասան 1905 թ. մայիսին, երբ տեղի ունեցավ Երևանի ընդհարումը՝ թաթարների համար կորստաբեր հետևանքներով: Մայիսի 29-31-ը Շարուրում տեղի ունեցան կատաղի կռիվներ: Բաքվից անմիջապես Երևան տեղափոխվեց և Արարատյան աշխարհի ռազմական ուժերի ընդհանուր հրամանատարությունը ստանձնեց քաջ հայդուկապետ Նիկոլ Դումանը[3], որը Բաքվի դեպքերից հետո մեծ ժողովրդականություն էր վայելում:

---

[3] **Նիկոլ Դուման** (Տեր-Հովհաննիսյան Նիկողայոս) (1867, գ. Ղշլաղ (ԼՂՀ Ասկերանի շրջանում) 1914, Բաքու), ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ: Մասնակցել է 1894-1896 թթ. Դերիկի կռիվներին: Բողազքյասանի մարտում վաստակել է Դուման անունը: 1895 թ. 50 հոգուց բաղկացած խմբով անցել է Վան: 1904 թ. փորձել է օգնության հասնել ապստամբ Սասունին, սակայն սահմանի վրա կռվի բռնվելով՝ տեղ չի հասել: 1905 թ. հայ-թաթարական

Նիկոլ Դումանի շտաբն այդ օրերին տագնապալի տեղեկություններ էր ստանում Շարուրի հայկական գյուղերի վրա թաթարների ու քրդերի հարձակումների մասին: Երևանի նահանգի հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ վարդապետը Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին ներկայացրած զեկուցագրում հայտնում էր, որ Շարուրի գավառում, որի բնակչությունը, բացառությամբ 8 հայկական գյուղի, թաթար են, կեղծ լուրեր են տարածել, իբր, հայերը հարձակվել են Քամարլու գյուղի վրա և կոտորել տեղի թաթար բնակչությանը: Իրականության հետ որևէ կապ չունեցող այդ կեղծ լուրն այնպիսի վրդովմունք էր առաջացրել թաթարների մոտ, որ նրանք որոշում են վրեժխնդիր լինել հայերից: Շարուրի հայկական գյուղերի բնակչությունը հայտնվել էր ծանր իրավիճակում **(Գևորգյան Հ., 2010)**:

Մայիսի 29-ին դրությունն արդեն լարված էր: Հայերը դադարել էին անցուդարձ անել թուրքական գյուղերի միջով: Գավառամասի դեպքերից մեկ օր առաջ՝ մայիս 29-ին Նախիջևանից ժամանած Շեյխ-ուլ-իսլամը և Կարապետ վարդապետը շտապեցին Բաշնորաշեն՝ թուրք բնակչությանը հորդորելու խաղաղություն ու համերաշխություն պահպանել: Հակառակ հորդորին նրանց հեռանալուն պես, թուրքերը հարձակվեցին Շարուրի վրա **(Ա-Դօ, 1907)**:

Մայիսի 30-ին շրջակա գյուղերի թուրք խուժանը երեք կողմից պաշարեց 220 տուն ունեցող Ուլյանորաշենը: Գյուղի բնակչությունը սկզբում ուժեղ դիմադրություն ցույց տվեց, չնայած կռվող ուժի փոքրաքանակությանը: Կռիվը տևեց մի քանի ժամ, բայց գյուղում բռնկված հրդեհը և մյուս կողմից էլ խուժանի թվաքանակի ստվարացումը ստիպեց գյուղացիներին նահանջել գյուղից դեպի Օղլան-Ղալա բլուր: Մոտ երկու ամիս բլրի լանջերին ապաստանած բնակչությունը ցրտի, սովի ու հիվանդությունների պատճառով ենթարկվեց զրկանքների, ունեցավ զոհեր, բայց չհանձնվեց **(Դևրիկյան Տ., 2006)**: Ներխուժելով Ուլյանորաշեն գյուղ՝ թաթարները սկսեցին կողոպտել ու հրդեհել գյուղը, որը տևեց երեք օր:

---

ընդհարումների ժամանակ ղեկավարել է Երևանի նահանգում և Արարատյան դաշտում գործող ուժերը, հմտորեն կազմակերպել հայերի ինքնապաշտպանությունը **(Հայկական հարց հանրագիտարան, 1996)**:

Անհավասար մարտում զոհվեց չորս հոգի, որոնցից միայն մեկն էր գյուղը պաշտպանող մարտիկներից, մինչդեռ թշնամին տվեց 30 սպանված (**Թարխանյան Գ., 2002**)։ Գյուղը կրեց մոտ 600.000 ռուբլու նյութական վնաս, ավելի քան 30.000 ռուբլու դաշտային կորուստ, կողոպտվեցին, հրդեհվեցին և հրո ճարակ դարձան 220 տուն և տասնյակ խանութներ (**Ա-Դօ, 1907**)։

Ուլյանորաշեն գյուղում տեղի ունեցած իրադարձությունների հետ միաժամանակ զանգվածային ներխուժումներ եղան դաշտավայրի մյուս հատվածներից։ Քեշտազ, Թազաքենդ, Դաշարխ, Ալաքլու և Վարմազիար գյուղերի բնակիչները փախան կենտրոնական մեծ գյուղ՝ Խանլուխլար։ Միայն Փարչի գյուղի բնակիչները չտեղափոխվեցին, քանի որ գյուղը կիպ էր Խանլուխլարին։

Մայիսի 30-ին թաթարները հարձակվեցին խառը բնակչություն ունեցող Քեշտազ գյուղի 54 հայկական տների վրա։ Գյուղի հայ և թաթար բնակիչները լավ հարաբերությունների մեջ էին, որի շնորհիվ հայերը նյութական կորուստներ չունեցան։ Նրանցից շատերը գիշերով փախուստի էին դիմել և ապաստանել Խանլուխլար գյուղում (**Գևորգյան Հ., 2010**)։

Մայիսի 31-ի վաղ առավոտյան ավերվեցին և հրդեհվեցին Դաշարխ, Թազագյուղ, Ալաքլու, Վարմազիար գյուղերը։ Ապա 500 քուրդ ձիավորներ, անցնելով ռուս-պարսկական սահմանը և ավերելով չորս գյուղեր, պաշարեցին Փարչին ու Խանլուխլարը, ուր ապաստանել էր յոթ գյուղերի շուրջ 4000 հայությունը։ Խանլուխլարը հայաբնակ մյուս գյուղերի նկատմամբ ուներ կենտրոնական դիրք։ Գյուղի ինքնապաշտպանությունը ղեկավարում էր նշանավոր հայդուկ Սեյդո Պողոսը[4] իր չորս քաջարի զինակիցներով (**Ֆարհատ, 1943**)։ Նրան

[4] **Սեյդո Պողոս** (1874, Ալվառինջ - 1907, Մուշ), հայ ազգային-ազատագրական շարժման մարտիկ, հայդուկ, ՀՅԴ կուսակցության անդամ։ Մասնակցել է հայդուկային բազմաթիվ կռիվների (Առաքելոց վանքի, Նորշենի, Հեղինի)։ Ակտիվ մասնակցություն է ունեցել Սասունի և գավառի 1904 թ. ինքնապաշտպանական մարտերին։ Անցնելով Կովկաս՝ Շարուրում ղեկավարել է Կովկասի թաթարների դեմ հայերի պայքարը։ 1907 թ. սկզբին վերադարձել է Սասուն, դարձել Գևորգ Չավուշի մերձավոր զինակիցը։ 1907 թ. վերջին մասնակցել է Սուլուխի կռվին և Գևորգ Չավուշի սպանվելուց հետո կազմակերպել Սուլուխի պաշտպանությունը։ Դավաճանաբար սպանվել է քրդերի ձեռքով Մշո Արտոնք գյուղում (**Հայկական հարց հանրագիտարան, 1996: “Армянский вопрос”, 1991**)։

այստեղ էր ուղարկել Նիկոլ Դումանը, թաթարների դեմ տեղացիների պաշտպանությունը ղեկավարելու համար:

Խանլուխլարում կազմված մարտախմբին միացավ տեղի 100 հոգանոց ստորաբաժանումը, որը երկօրյա կռիվներից հետո զոհեր տալով նահանջեց դպրոց՝ պաշտպանելու կանանց և երեխաներին: Հաջորդ գիշեր՝ կազակների գալուց անմիջապես հետո, վաշտը վերադարձավ դիրքերը և ձեռնարկեց համատեղ հարձակում: Վերցվեց 100 գերի, ակնհայտ դարձավ սահմանի երկու կողմերում թուրքերի, քրդերի և թաթարների միասին գործելու իրողությունը, գտնվեցին թուրքերեն բազմաթիվ թռուցիկներ: Հասկանալով, որ սահմանախախտներն անվերահսկելի կդարձնեն իրավիճակը՝ զորքն առաջին անգամ բացահայտ անցավ հայերի կողմը, իսկ քրդերը, ուշքի գալով պարտությունից, շարժվեցին Երևանի ուղղությամբ **(Դևրիկյան Տ., 2006)**:

Խանլուխլարը թաթարներին գրավել չհաջողվեց: Շնորհիվ հայկական կողմի կազմակերպած դիմադրության՝ գյուղի հայությունն ունեցավ երկու սպանված **(Գևորգյան Հ., 2010)**: Գյուղի համար մղվող կռիվների ժամանակ իր քաջությամբ և ղեկավարելու հմտությամբ աչքի ընկավ Սեյդո Պողոսը, որը փրկեց Խանլուխլարի ամբողջ շրջանը անխուսափելի ջարդից: «Մեր ժողովուրդը լքուած էր եւ պարտուողական ոգիով ներշնչուած՝ թաթար բէկերու շնորհին ապաւինելու տրամադրութիւն ունէր, երբ Սէյտօն հոն չէր դեռ: Ան կրցաւ, իր սակաւաթիւ ուժերով, պաշտպանել գիւղը» **(Փափազեան Վ., 1950)**: Տեղի գյուղերի հայ բնակչությունը երախտապարտ է եղել Սեյդո Պողոսին կոտորածներից իրենց փրկելու համար: Վ. Փափազյանն իր հուշերում նրա մասին գրում է. «...դարձած էր պաշտամունքի առարկայ, բայց մնացած էր նոյն պարզ ու համեստ մարդը» **(Փափազեան Վ., 1950)**:

Հունիսի 1-ին խաղաղություն հաստատելու նպատակով Խանլուխլար գյուղ է գալիս գեներալ Ալիխանով-Ավարսկին[5]: Ծանոթանալով գյուղում տիրող

[5] Եղել է 1905թ. հայ-թաթարական բախումների հրահրողներից, Նախիջևանում հայերի կոտորածների կազմակերպիչը: Սպանվել է 1907 թ. Ալեքսանդրապոլում Դրաստամատ Կանայանի (Դրո) և Մարտիրոս Չարխչյանի կողմից:

իրավիճակին, նա արեց ճիշտ հակառակը, ազատեց գերված 98 թալանչիներին և նրանց առաջնորդ դրոշակակիր մոլլային։

Կռիվները ծանր հետևանքներ ունեցան. տարածվել էին տարափոխիկ հիվանդությունները, սպառվել ձմռան պաշարները, քանի որ կռիվների պատճառով Շարուրի հայ բնակչությունը շաբաթներ շարունակ չէր կարողացել մշակել դաշտերը։ 7 գյուղերից սպանվեց 11 մարդ **(Ա-Դո, 2007)**։ Այդ ամենով հանդերձ, չնայած ունեցած փոքրաքանակ զենքին և մարտական ուժին՝ Շարուրի ինքնապաշտպանական ուժերին հաջողվեց կազմակերպված և խելամիտ դիմադրության շնորհիվ կռիվներում հաղթանակներ տանել։

**Կռիվները Դարալագյազում:** Դարալագյազը Երևանի նահանգի ամենահետամնաց շրջաններից մեկն էր։ Կենտրոնը Քեշիշքենդ (Եղեգնաձոր) գյուղն էր։ Գյուղացիներից շատերը ընտանիքի հոգսերը հոգալու նպատակով գնում էին արտագնա աշխատանքի։ Նախիջևանի և Շարուրի մայիսյան դեպքերից հետո իրավիճակը փոխվեց նաև Դարալագյազում։ Նիկոլ Դումանի կողմից որպես ընդհանուր հրամանատար իր մարտախմբով Դարալագյազ ուղարկվեց արևմտա-հայ նշանավոր հայդուկ Առյուծ Ավագը[6] և Օշին Սարկավագը՝ 18 կամավորներով **(Ֆարհատ, 1943)**։ Ժամանելով Երևան և ստանձնելով «Զինվորական մարմնի» ղեկավարությունը՝ Նիկոլ Դումանը ըստ արժանվույն է գնահատում Առյուծ Ավագի զինվորական փորձն ու կարողությունները և նրան է հանձնում Դարալագյազի մարտական ուժերի հրամանատարությունն ու ինքնապաշտպանության կազմակերպումը։ Ժամանակակցի բնութագրմամբ, Առյուծ Ավագը «կյանքում մի պաշտամունք ուներ՝ Սերոբ փաշան։ Նրա մասին խոսելիս հիշեցնում էր տաճարում աղոթող հավատացյալի։ Նրա անունը թուրքերի համար սոսկում-սար-սափի հոմանիշ դարձավ» **(Դևրիկյան Տ., 2006)**։

---

[6] **Առյուծ Ավագ** (ծ. թ. անհայտ, Խլաթ - 1905), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, ՀՅԴ կուսակցության անդամ։ 1895-1898 թթ. գործել է Աղբյուր Սերոբի խմբում։ 1890-ական թթ. վերջին զբաղվել է Կովկասից Խլաթ զենք փոխադրելու գործով։ 1900-ական թթ. սկզբին գործել է Վանում, ապա՝ Պարսկաստանում և Կովկասում։ 1905 թ. Դարալագյազի շրջանում մասնակցել է հայ-թաթարական կռիվներին։ Գնդակահարվել է կուսակցական կարգապահությունը խախտելու համար **(“Армянский вопрос”, 1991; Ով ով է. հայեր, հ. 1, 2005)**։

Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր կազմակերպել ինքնապաշտպանություն, որի համար անհրաժեշտ էր զենք: Դարալագյազի հայությունը մինչև Երևանից զենք ստանալը ուներ շատ քիչ զենք ու զինամթերք՝ ընդամենը հինգ մարտական հրացան: ՀՅԴ Մրգաստանի կենտրոնական կոմիտեն Շարուր-Դարալագյազի գրեթե բոլոր գյուղերում ուներ իր կուսակցական կառույցները, որոնց աշխատանքները համակարգում էր Վայոց Ձորի շրջանային կոմիտեն: Չնայած Դարալագյազի հայությունը թաթարների համեմատ ավելի հարուստ էր, բայց զինվածության առումով զգալիորեն զիջում էր նրանց: Դարալագյազում հայությանը զինելու համար Վայոց Ձորի շրջանային կոմիտեին առաջին հերթին հարկավոր էր ձեռք բերել ֆինանսական միջոցներ, որոնք հնարավոր էր ձեռք բերել միայն հանգանակության կազմակերպմամբ: Բայց հանգանակություն կազմակերպելու ՀՅԴ-ի դիմումները բնակչության շրջանում արձանգանքներ չէին գտնում, որի հիմնական պատճառն այն էր, որ գյուղացիները «չէին հաւատում ընդհարումների հաւանականութեանը» **(Աստվածատրեան Ա., 1938)**:

Գավառում հայկական գյուղերը միմյանցից բավականին հեռու էին և շրջապատված բազմաթիվ թուրքական գյուղերով: Հայկական գյուղերի նման դասավորվածությունը հայերին դնում էր վտանգավոր դրության մեջ՝ ինքնապաշտպանությունը կազմակերպելու առումով: Բացի այդ, ամռանը Դարալագյազի լեռներ էին գալիս քրդերը, թուրքերը և այլ ցեղեր, որն ավելի էր բարդացնում իրավիճակը:

Կռիվների լուրերն արդեն հասել էին Դարալագյազ: Հայերը և թաթարները շարունակում էին իրենց առօրյա բնականոն կյանքը, բայց դուրս չէին գալիս Դարալագյազի գավառակի տարածքից: Գավառակի թաթարները, բացի Ջուլի գյուղից, բարեկեցիկ չէին և ամեն կերպ համոզում էին հայերին չհավատալ կռիվների մասին լուրերին **(Աստվածատրեան Ա., 1938)**:

Մայիսին դրությունը չափազանց սրվել էր: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար հայությունը համախմբվեց՝ դիմելով ինքնապաշտպանության: Թողնելով իրենց տները, տնտեսությունը, դաշտային աշխատանքը՝ նրանք զենքը

ձեռքին պաշտպանում էին իրենց գյուղերի սահմանները թուրքերի հարձակումներից **(Ռուբենի Ալ., 1905)**:

Կռիվները սկսվեցին գավառամասի հարավային մասից, որը սահմանակից էր Նախիջևանին: Տեղական թուրք տարրերը, միանալով թափառական ցեղերին, սկսեցին հարձակումներ գործել հայկական գյուղերի վրա **(Ա-Դօ, 2007)**: Մայիսի 12-20-ը թաթարները հարձակումներ գործեցին հայաբնակ Մարտիրոս, Փաշալու, Դայլախլու, Թառաթումբ, Էրդափին, Քարագլուխ, Ղոյթուլ և խառը բնակչություն ունեցող Հերհեր, Գնդևազ գյուղերի վրա **(Աստվածատրեան Ա., 1938)**: Առաջինը հարձակման ենթարկվեցին Մարտիրոս, Փաշալու գյուղերը, որոնք ընկած էին Նախիջևանի սահմանին: Փաշալու գյուղի շրջանն ամենավտանգավորն էր, այդ պատճառով կոմիտեի տրամադրության տակ եղած զենքերը գտնվում էին այստեղ: Հայերին հաջողվեց հետ մղել թաթարների հարձակումները, որոնք չկարողանալով ներխուժել գյուղ, գողացան ոչխարի հոտերի մի մասը և հեռացան:

Ի տարբերություն Դարալագյազի շրջանի հայ բնակչության՝ գավառակի, հատկապես Ջուլի գյուղի թուրքերը շատ լավ էին զինված: Այս պայմաններում ՀՅԴ Մրգաստանի կենտրոնական կոմիտեն որոշում է «...ֆիդայական խմբեր «ցուցադրել» թուրքական որոշ գյուղերի» հատկապես Ջուլի գյուղի սահմաններում **(Գևորգյան Հ., 2010)**: Գավառակի հայկական գյուղերից ընտրելով քաջ երիտասարդների՝ մի մասին զինեցին եղած զենքերով, իսկ մյուսների համար էլ «ճարեցինք եափունջներ, բաշլիկներ ու մեծ փափախներ» **(Գիւլխանդանեան Ա., 1933)**: Այս մարտավարությունը ինչ-որ չափով օգտակար էր: Թաթարները, տեսնելով զինված հայերին, լուրեր էին տարածում իրենց շրջանում գտնվող հայդուկների մասին:

Մայիսի 15-ին թաթարները հարձակվեցին 89 տուն ունեցող Սուլթան բեկ գյուղի վրա, որը թալանելուց հետո, հայերի տները հրդեհի մատնեցին: Այնուհետև հարձակվեցին Սես գյուղի հայ բնակչության վրա, որոնց հաջողվեց պաշտպանվել և թաթարներին թույլ չտալ թալանել գյուղը: Շարունակելով հարձակումը՝ թաթարները պաշարեցին Ալմալու գյուղը, որը դիմադրության շնորհիվ 18 օր

պաշարված մնաց։ Պաշարման ընթացքում թաթարներն ունեցան 20 սպանված **(«Մշակ», 1905)**։

Ծանր էր դրությունը Դայլախլու, Թառաթումբ, Էրդափին, Քարագլուխ, Ղոյթուլ գյուղերում, որոնց բնակչությունը, չկարողանալով դիմադրություն ցույց տալ թվապես գերազանցող թաթարներին, հարկադրված փախուստի դիմեց **(Գևորգյան Հ., 2010)**։ Նրանք ապաստանեցին Փոռ գյուղում, որը թաթարները թալանեցին և ավերեցին։ Դայլախլու գյուղը նույնպես ավերվեց, իսկ տները հրդեհի մատնվեցին։ Այնուհետև թաթարները հարձակվեցին Գնդևազ և Հերհեր գյուղերի վրա, որոնք ամբողջ Դարալագյազում միակ թուրքախառն գյուղերն էին։ Հարձակման հետևանքով Գնդևազի հայությունը թալանի ենթարկվեց՝ տալով երկու սպանված, իսկ Հերհերում թալան չեղավ, քանի որ տեղի թուրքերը համոզված էին, որ գյուղի ամբողջ ունեցվածքը պատկանում է իրենց։

Հունիսի 1-2-ին Իթղռանի թաթարները հարձակվեցին Այար (49 հայկական տուն) և Քեշիշքենդ (154 հայկական տուն) գյուղերի վրա։ Տեղի ունեցած ընդհարումներից սպանվեց մեկ հայ։ Քեշիշքենդցիները ստիպված հեռացան Մալիշկա գյուղ։ Թաթարներն այլևս չկարողացան առաջ գնալ, քանի որ Մալիշկա և Մարտիրոս գյուղերում հայերը կազմել էին զինված խումբ՝ Առյուծ Ավագի և Մարտիրոսի գլխավորությամբ **(«Մշակ», 1905)**։

Հունիսի 2-ին Չիվա գյուղի մի քանի պատվավոր թուրքեր հաշտության բանակցություններ էին վարում հայերի հետ, երբ գյուղ ներխուժեցին մի քանի հարյուր թուրքեր։ Հայերն անակնկալի գալով, չկարողացան ինքնապաշտպանություն կազմակերպել և ենթարկվեցին սոսկալի կողոպուտի։ Շրջակա գյուղերը նույնպես ենթարկվեցին կոտորածի և կողոպուտի։

Հունիսի 8-15-ը 2000-ից ավելի հրոսակներ պաշարեցին Մարտիրոսը, ևս 1500-ը՝ Փաշալուն։ Ծանր կռիվները շարունակվեցին մինչև հունիսի կեսերը, երբ տալով բազմաթիվ զոհեր, թաթարներն, ի վերջո, հեռացան։ Վտանգն այժմ սպասում էր Նախիջևանի լեռնային մասից **(Ա-Դօ, 1907)**։ Խառը բնակչությամբ Գնդևազում թաթարները, արգելելով դրսի խուժանի մուտքը գյուղ, իրենք կողոպտեցին հայերին, իսկ Հերհերում հայերի ունեցվածքը համարելով իրենցը՝ մի օր

հասկացան, որ նրանք արդեն զինված են և հարկադրված խաղաղություն խնդրեցին։

Անհրաժեշտ էր ոչնչացնել Իթղռանի ավազակաորջը։ Այդ նպատակով Առյուծ Ավագն անձամբ գնաց տեղազննության և հետախուզության, բայց մինչ որոշվում էր այստեղ կուտակված թալանը տերերին վերադարձնելու ուղիները՝ շրջակա խուժանն Իթղռանի առաջնորդությամբ ավերեց Սուլթանբեկը։ Բնակչության մի մասը զոհվեց, մյուսներն ապաստանեցին Մարտիրոսում։ Նույնը կրկնվեց Հորսի պարագայում։

Առյուծ Ավագին տեղեկացնում են, որ «թուրքերը շարժում են դէպի Մարտիրոս» գյուղ, իսկ նա էլ իր հերթին հրաման տվեց. «որեւէ ձայն չհանել մինչեւ իր նշանը»՝ գյուղացիներին հրամայելով անհանգստության և խուճապի տեսարան ստեղծել (**Աստուածատրեան Ա., 1938**)։ Թաթարները դա տեսնելով՝ համարձակ առաջ շարժվեցին և պաշարեցին գյուղը։ Սկսվեց հրաձգություն, որին հայերը չէին պատասխանում։ Երբ բազմահազար խուժանը գրոհեց Մարտիրոս գյուղի վրա, Առյուծ Ավագի հրամանով հայ զինվորները հանկարծակի հարձակվեցին և խուճապի մատնեցին թաթարներին, որոնք փախուստի դիմեցին։ Առյուծ Ավագն ու իր մարտիկները հետապնդեցին ու քշեցին նրանց։

Չհամարձակվելով գրոհել իրենց ծանր դասեր տված Մարտիրոսը՝ թաթարները պաշարեցին փոքրիկ Ալմալուն, որն արդեն հասցրել էր զենք ստանալ և 18-օրյա կռիվներից հետո անցնել հակահարձակման։ Սակայն շուտով թաթարները օգնություն ստացան և պաշարեցին Փոռ, Էրդափին, Քարագլուխ ու Թառաթումբ գյուղերը՝ ծանր վիճակի մեջ գցելով բնակչությանը։

Դարալագյազի գրեթե բոլոր հայկական գյուղերում ծանր կռիվներ էին (**Գևորգյան Հ., 2010**)։ Առյուծ Ավագին հաջողվեց կենտրոնացնել բոլոր ուժերը, որոնք անցնելով հակահարձակման՝ մինչև հունիսի 15-ը ազատագրեցին կորցրած գյուղերը, այնուհետև երեքժամյա կռվում ոչնչացնելով մոտ 1100 հրոսակների՝ ավերեցին Իթղռանը (**Դևրիկյան Տ., 1906**)։ Իթղռան և Մարտիրոս գյուղերի կռիվներում հայ մարտիկները ոչ միայն փառահեղ հաղթանակներ տարան, այլև սարսափ տարածեցին թաթարների շրջանում (**«Մշակ», 1905**)։ Առյուծ Ավագը գոհ

էր իր մարտավարությունից և մտածում էր «այնպէս պատժել անօրէններին, որ այլեւս նրանց մտքով անգամ չանցնի Դարալագեազի հայ գիւղերի վրայ յարձակուել» **(Աստուածատրեան Ա., 1938)**:

Հուլիսի 5-ին և 10-ին Այլիջայում ևս երկու խոշոր ընդհարում եղավ, որի ժամանակ քրդերը մեծ կորուստներ ունեցան:

Դարալագյազի գրեթե բոլոր հայկական գյուղերը կոտորածի ու ավերումների ենթարկվեցին թաթարական հարձակումների հետևանքով: Շրջանը խաղաղվեց միայն քոչվոր ցեղերի հեռանալուց հետո: Իսկ հոկտեմբերի 27-ին եկավ Հորսի հատուցման ժամը: Թողնելով 40-ից ավելի սպանված՝ թշնամին փախուստի դիմեց, գյուղն ավերվեց, բայց իշխանությունները, զարմանալիորեն արագ արձագանքելով կատարվածին, բռնագրավեցին շրջակա հայկական գյուղերի անասունը՝ Հորսի հրոսակների վնասները փոխհատուցելու համար **(Դևրիկյան Տ., 1906)**: Դրա հետևանքով մի քանի հայեր բանտ նստեցին, իսկ 6-7 հայկական գյուղեր թալանվեցին և ավարը բաժանվեց Հորսի թուրք բնակչությանը:

Ամփոփելով նշենք, որ Շարուր-Դարալագյազում տեղի ունեցած հայ-թաթարական ընդհարումների հետևանքով սպանվել է 20 և վիրավորվել 6 հայ, կողոպտվել է 723 և այրվել 305 հայկական տուն: Հափշտակվել է 1104 խոշոր եղջերավոր անասուն, 730 ոչխար, 84 ձի: Դրամական առումով հայերը կրել են 867.000 ռուբլու վնաս **(Անանուն Դ., 1926)**: Կռիվները երկու ժողովուրդներին պատճառեցին տնտեսական մեծ վնասներ, որոնք հաղթահարելու և նախկին իրավիճակին հասնելու համար անհրաժեշտ էին տարիներ: Արամայիսը իր հուշերում գրում է. «Միմեանց ոչնչացնելու պատրաստութիւններն ահագին գումարներ կլանեցին երկու կողմերից, ...իւրաքանչիւրը առնւազն տասն հազար ռուբլի է ծախսել «պատերազմական» կարիքների համար եւ ծուխ դարձնելով՝ բաց թողել օդի մէջ» **(Արամայիս, 1907)**:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1905 թ. փետրվարից մինչև 1906 թ. աշունը Արևելյան Հայաստանում տեղի ունեցած հայ-թաթարական կռիվները հոգեբանական բեկում մտցրեցին մեր ազգի հոգեբանության մեջ, որն առաջացավ հատկապես արևելահայության մոտ:

Վերջինս համոզվեց, որ կարող է դիմադրել թաթար հրոսակներին և ոչ միայն պաշտպանվել, այլև, հարկ եղած դեպքում, դիմել ինքնապաշտպանության: Այդ առումով կարևոր էր հատկապես արևմտահայ եղբայրների աջակցությունը:

Հայ-թաթարական կռիվները տնտեսապես քայքայեցին երկու ժողովուրդներին: Կռիվներից հետո մեծ թվով գյուղեր սկսել էին դատարկվել աշխատող ուժ հանդիսացող երիտասարդներից, ովքեր անցնում էին տարբեր քաղաքներ ապրուստի միջոցներ հայթայթելու համար **(Նիւթեր..., Ե. հատոր, 2007)**: Դրանցից անմասն չմնաց նաև Շարուր-Դարալագյազը:

Հայ-թաթարական ընդհարումներին հաջորդեց սովն ու համաճարակը: Դաշտերը չէին ցանում, եղած բերքն էլ ոչ ջրում էին, ոչ քաղում: Շատ էին տուժածներն ու վիրավորները: Անհրաժեշտ էր բժշկական և նյութական օգնություն ցույց տալ տուժածներին: Այդ նպատակով 1905 թ. փետրվարի 10-ին կյանքի է կոչվում «Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը»: Նորաստեղծ մարմինն ընդունեց կաթողիկոսի հովանավորությունը և որոշվեց միջոցներ ձեռք բերելու համար ծրագրեր մշակել և փրկել սովի ճիրաններում գտնվող հայությանը:

Հայ-թաթարական կռիվները հանգեցրեցին մի շարք գավառների ժողովրդագրական պատկերի փոփոխությանը՝ արտագաղթի ալիքը մեծ էր: Այնուամենայնիվ, Շարուր-Դարալագյազի հայությունը, ի տարբերություն Նախիջևանի հայության, կենտրոնանալով գավառի խոշոր գյուղերում, թեև ուներ փոքրաքանակ զենք և մարտական ուժեր, կարողացավ կազմակերպել ինքնապաշտպանություն և դիմագրավել թշնամու գրոհներին:

Ավելի քան մեկ դար առաջ տեղի ունեցած այդ իրադարձությունների լուսաբանումն ու վերհանումն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Այսօր էլ, հայ-ադրբեջանական հարաբերությունները ուշադրության կենտրոնում են պահում ոչ հեռավոր անցյալի պատմական իրադարձությունները, հատկապես նախորդ դարում տեղի ունեցած հայ-թաթարական (թուրքական) առճատակումները, հիմնախնդիր, որի նկատմամբ հետաքրքրությունը չի մարել անգամ XXI դարի առաջին քառորդին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. **Ա-Դօ (1907),** Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, Երևան, տպ. Այվազեանցի և Նազարեանցի: https://www.academia.edu
2. **Անանուն Դ. (1926),** Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. երրորդ, Վենետիկ, տպ. Ս. Ղազար:
3. **Աստուածատրեան Ա. (1938),** Մի էջ հայ-թրքական ընդհարումների պատմութիւնից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, յունիս, № 8, էջ 120-130, օգոստոս, N 8, էջ 134; № 10, էջ 132-143:
4. **Արամայիս (1907),** Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհարումներից, մաս 2, Թիֆլիս, “Гермесъ” հրատ. :
5. **Գևորգյան Հ. (2010),** Ազատագրական պայքարի Կովկասյան ճակատը, Երևան, տպ. «Գևորգ-Հրայր» ՍՊԸ:
6. **Գիւլխանդանեան Ա. (1933),** Հայ-թաթարական ընդհարումները Անդրկովկասում, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, սեպտեմբեր, № 11, էջ 154-159:
7. **Դևրիկյան Տ. (2006),** Հայ-թաթարական բախումները, Երևան, «ՍԻՄ» հրատ. :
8. **Եղիազարյան Կ. (2025)**, 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների պատճառների քննություն, ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», № 1 (68), էջ 141-159:
9. **Թարխանյան Գ. (2002),** 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների պատճառները և ընթացքը, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, https://dspace.nla.am
10. **Հայկական հարց հանրագիտարան (1996),** Խմբ.՝ Կ. Խուդավերդյան և ուրիշ., Երևան, Հայկական հանրագիտարանի հրատ https://ivi.am
11. **«Մշակ» (1905),** յունիս, N 115, https://arar.sci.am
12. **«Մուրճ» (1905),** յուլիս, N 7, https://arar.sci.am
13. **Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (2007),** խմբ. Ե. Փամբուկեանի, հատ. Ե, Պէյրութ: https://elibrary.am

**Ով ով է. Հայեր (2005),** Կենսագրական հանրագիտարան, Երկու հատորով,, ՀՀ խմբագրական հանձնաժողով՝ Հ.Մ. Այվազյան (գլխ. խմբագիր), և ուրիշներ, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., հատ. 1, Աբալյան-Ղուշչյան: https://armunicat.nla.am

14. **Ռուբենի Ալ. (1905),** Հայ-թիւրքական ջարդերի տնտեսական-քաղաքական պատճառները, «Մուրճ», Թիֆլիս, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 189-206:
15. **Ստեփանյան Գ. (2021),** Հայերի էթնիկ զտումների և ցեղասպանական քաղաքականության իրագործման փուլերն Արևելյան Այսրկովկասում (XI-XX դդ. ), մաս բ, «Գիտական Արցախ», № 2 (9), 2021, էջ 15-38:
16. **Փափազեան Վ. (1950),** Իմ Յուշերը, հատ. Ա, «Հայրենիք» հրատ. , տպարան, Պօսթրն: https://armunicat.nla.am
17. **Ֆարհատ (Օհանջանեան Ս.) (1943),** Իմ յիշատակարանը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 5, էջ 74-83: https://armunicat.nla.am
18. **“Армянский вопрос” (1991)**, Энциклопедия, Ред. кол. К.С. Худавердян (отв. ред.) и др., Ереван, https://www.encyclopedia.ru

**REFERENCES**

1. **A-Do (1907),** Hay-towrqakan yndharowmy' Kovkasowm /Armenian-Turkish Conflict in the Caucasus/, Yerevan, Published by Ayvazyantsi and Nazaryan.: https://www.academia.edu
2. **Anonymous D. (1926),** Rowsahayeri hasarakakan zargacowmy' /The Social Development of Russian Armenians/, Vol. Three, Venice, published by S. Ghazar.
3. **Asdvadsatrian A. (1938),** Mi ej hay-towrqakan yndharowmneri patmowtyownic /A page from the history of Armenian-Turkish clashes/, "Hayrenik" magazine, Boston, June, No. 8, pp. 120-130, August, No. 8, p. 134. N 10, pp. 132-143:
4. **Aramayis (1907),** Mi qani glowx hay-towrqakan yndharowmneric /A Few Chapters from the Armenian-Turkish Conflicts/, Part 2, Tiflis, published by Hermes.

5. **Gevorgyan H. (2010),** Azatagrakan payqari Kovkasyan twakaty /The Caucasian Front of the Liberation Struggle/, Yerevan, published by "Gevorg-Hrayr" LLC:
6. **Gyulkhandanian A. (1933),** Hay-tatarakan yndharowmnery Andrkovkasowm /Armenian-Tatar Conflicts in the Transcaucasus/, "Hayrenik" magazine, Boston, September, No. 11, pp. 154-159.
7. **Devrikyan T. (2006),** Hay-tatarakan baxowmnery /Armenian-Tatar clashes/, Yerevan, published by SIM.
8. **Yeghiazaryan K. (2025),** 1905-1906 t.t. hay-tatarakan krivneri pattwarneri qnnowtyown /1905-1906. An examination of the causes of the Armenian-Tatar wars/, ASPU Journal of Armenian Studies, No. 1 (68), pp. 141-159.
9. **Tarkhanyan G. (2002),** 1905-1906 t.t. hay-tatarakan krivneri pattwarnery & yntacqy /The Causes and Course of the Armenian-Tatar Battles in 1905-1906/, History. sciences. Candidate's degree defence, Yerevan. https://dspace.nla.am
10. **Armenian Question Encyclopedia (1996)** /ed. K. Khudaverdyan and others., Yerevan, ed. The Armenian Encyclopedia. https://ivi.am
11. "**Mshak" (1905),** June, N 115. https://arar.sci.am
12. **"Murch" (1905),** July, N 7. , https://arar.sci.am
13. Materials for the History of the Armenian Revolutionary Federation Dashnaktsutyun (2007), ed. by D. E. Pambukian, vol. E, Beirut. https://elibrary.am
14. Who's who. The Armenians (2005) (biographical encyclopedia. in two volumes), the RA Editorial Committee, Edited by O.M. Ayvazyan (head editor) and others, Yerevan, Armenian Encyclopedia ed., issue 1, Abalyan-Gushchyan. https://armuicat.nla.am
15. **Rubeni A. (1905),** Hay-towrqakan jarderi tntesakan-qaghaqakan pattwarnery /Economic and political causes of the Armenian-Turkish massacres/, "Murch", Tiflis, November-December, N 11-12, pp. 189-206.

16. **Stepanyan G. (2021),** Hayeri etnik ztowmneri & ceghaspanakan qaghaqakanowtyan iragorcman powlern Ar&elyan Aysrkovkasowm (XI-XX dd.), /The Stages of Implementation of the policy of ethnic cleansing and genocide of Armenians in the Eastern Ciscaucasus (11th-20th cc.) (Part II), Scientific Artsakh, № 2(9), 2021, pp. 15-38.
17. **Papazian V. (1950),** Im howshery /My Memories/, Vol. A, published by "Hayrenik" Publishing House, Boston. https://armunicat.nla.am
18. **Farhad (Ohanjanian S.) (1943),** Im yishatakarany /My Memories/, //"Hayrenik" Magazine, Boston, Sept.-Oct., No. 5, pp. 74-83. https://armunicat.nla.am
19. **"Armenian Question Encyclopedia" (1991)**, /edited by K.S. Khudaverdyan (editor) and others, Yerevan.
https://www.encyclopedia.ru

**Карине Егиазарян, Кнарик Петросян, Сусанна Аракелян**

**Армяно-татарские столкновения в Шарур-Даралагязе (1905)**

**Заключение**

***Ключевые слова и выражения:*** *армяно-татарские столкновения, Шарур, Даралагяз, Никол Думан, Арьюц Аваг, Сейдо Погос, самооборона.*

В 1905-1906 годах бурные события, происходившие в Закавказье в течение определенного периода времени, привлекли внимание всех армян к проблемам кавказских армян. Различные проблемы, накопившиеся в отношениях армянского и татарского населения, проживавшего бок о бок, благодаря провокационной политике царских властей, проявились во всех своих оттенках, сделав главной темой обсуждения вопросы борьбы за выживание кавказских армян и организации эффективной самообороны. Кавказские армяне пережили в те годы период трудных, но достойных испытаний. Они понесли тяжелые человеческие и материальные потери, но также получили необходимые уроки уверенности в себе и национального достоинства.

Причиной начала армяно-татарских распрей стали этнические, политические, социально-экономические, культурные, религиозные и ряд других факторов **(Степанян Г., 2021; Егиазарян К., 2025)**. Противоречие в культурных и цивилизационных устремлениях двух народов было очевидным. Это различие дало повод некоторым теоретикам обвинять армян в том, что армянские националисты думали только об армянском народе и не занимались также образованием и воспитанием соседних турок **(Тарханян Г., 2002).** Бои, помимо Баку, распространились и на различные области Ереванской губернии. Шарур-Даралагязь не остался в стороне от боевых действий.

**Karine Yeghiazaryan, Knarik Petrosyan, Susanna Arakelyan**

**Armenian-Tatar fights in Sharur-Daralagyaz (1905)**

**Conclusion**

***Key words and expressions:*** *Armenian-Tatar fights, Sharur, Daralagyaz, Nicol Duman, Aryuts Avag, Seydo Poghos, self-defense.*

In 1905-1906, the turbulent events that took place in the Transcaucasus for a certain period of time focused the attention of all Armenians on the problems of the Caucasian Armenians. The various problems accumulated in the relations of the Armenian and Tatar populations living side by side, thanks to the provocative policy of the Tsarist authorities, manifested themselves in all their shades, making the main issue of the agenda the issues of the struggle for survival of the Caucasian Armenians and the organization of effective self-defense. The Caucasian Armenians went through a period of difficult but honorable trials in those years. He suffered heavy human and material losses, but he also received necessary lessons in self-confidence and national dignity.

The reason for the beginning of the Armenian-Tatar feuds were ethnic, political, socio-economic, cultural, religious and a number of other factors **(Stepanyan G., 2021; Yeghiazaryan K., 2025)**. The contradiction in the cultural and civilizational aspirations of the two peoples was obvious. This difference has given rise to some theorists even accusing the Armenians of thinking that the Armenian nationalists only thought about

the Armenian people and did not engage in the education and upbringing of the neighboring Turks **(Tarkhanyan G., 2002).** Armenian-Tatar wars, in addition to Baku, also spread to various provinces of the Yerevan region. Sharur-Daralagyaz was not left out of the fighting.

**Կարինե Եղիազարյան** – Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայոց պատմության նոր և նորագույն շրջանի պատմություն: Հեղինակ է 1 մենագրության, 8 ուսումնամեթոդական աշխատանքների, 23 հոդվածների:karine.yegiazaryan@yandex.ru

**Քնարիկ Պետրոսյան** - ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Հայրենիք-Սփյուռք հարաբերություններ, հայ գաղթօջախների և Հայկական սփյուռքի պատմություն, հայոց պատմության հիմնահարցեր: Հեղինակ է 1 մենագրության, կազմել է 1 փաստաթղթերի ժողովածու, 2 համահայկական համաժողովների նյութերի ժողովածու: Հոդվածների թիվը՝ 28: k_narik@mail.ru

**Սուսաննա Առաքելյան** – ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ XIX դարի վերջի և XX դարասկզբի հայոց պատմության նոր և նորագույն շրջանի հիմնախնդիրներ: Հեղինակ է 4 հոդվածների: susanna.araqelyan@ysu.am

**Карине Егиазарян** - Доцент кафедры истории Армянского народа ЕГУ, кандидат исторических наук. Сфера научных интересов: история нового и новейшего периода армянской истории. Является автором 1 монографии, 8 учебно-методических работ и около 23 статей. karine.yegiazaryan@yandex.ru

**Кнарик Петросян -** научный сотрудник отдела истории Армянских колоний и диаспоры Института истории НАН РА, кандидат исторических наук. Сфера научных интересов: отношения Родина-Диаспора, история армянских колоний и Армянской

диаспоры, проблемы армянской истории. Автор 1 монографии, составила 1 сборник документов, 2 сборника материалов всеармянских форумов. Количество статей: 28. k_narik@mail.ru

**Сусанна Аракелян** – Аспирантка кафедры истории Армении ЕГУ. Сфера научных интересов: вопросы нового и новейшего периода истории Армении конца XIX – начала XX веков. Автор 4 статей. susanna.arakelyan@ysu.am

**Karine Yeghiazaryan** - Associate Professor of the Department of Armenian History, YSU, Candidate of Historical Sciences. Scientific interests: the history of the new and modern period of Armenian history. Author of 1 monograph, 8 educational and methodological works, about 23 articles. karine.yegiazaryan@yandex.ru

**Knarik Petrosyan -** is a researcher at the Department of History of the Armenian Colonies and Diaspora at the Institute of History of the National Academy of Sciences of the RA, Candidate of Historical Sciences. Research interests: Homeland-Diaspora relations, history of the Armenian colonies and the Armenian Diaspora, problems of Armenian history. Author of 1 monograph, compiled 1 collec of documents, 2 collections of materials from pan-Armenian forums. Articles number 28. k_narik@mail.ru

**Susanna Arakelyan** – Candidate at the Department of Armenian History of YSU. Research interests: issues of the new and modern period of Armenian history of the late 19th - early 20th centuries. Author of 4 articles. susanna.arakelyan@ysu.am

*Խմբագրություն է ուղարկվել 26.04.2026թ.*

*Հանձնարարվել է գրախոսության 04.05.2026թ.*

*Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.*